ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

«16» օգոստոսի 2021 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

Ավագանու նիստին ներկա էին ավագանու ութ անդամ. Գարեգին Մկրտչյանը, Արտյոմ Զաքարյանը, Սլավիկ Խաչատրյանը, Ջանիբեկ Ղաֆարյանը, Պետրոս Սահակյանը, Ռուստամ Առաքելյանը, Մանուկ Առաքելյանը և Լևոն Հովսեփյանը:

Նիստը վարում էր Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանը, նիստն արձանագրում էր Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Արփինե Կարապետյանը:

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ Մամեդ Սալոյանը, Թերեզա Մինասյանը, Արմինե Մարդոյանը, Արտաշ Եղիկյանը և <<Հայաստանի ֆինանսիստների միավորում>> տեղական ժողովրդավարության դպրոցի սաներ՝ Կարինե Ավետիսյանը, Իզաբելա Գրիգորյանը և Անի Ասլանյանը:

Ավագանու նիստին ներկայացվեց օրակարգի նախագիծը.

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի /ԺԱՄԸ 11:30/ ՆԻՍՏԻ

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի 2021 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Վահրամաբերդ բնակավայրի 08-108-0013-0030, 0031 կադաստրային ծածկագրից հողատարածքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0.15278 հեկտար հողամասից 0.03278 հեկտար հողամասը ուղղակի վաճառքով քաղաքացի՝ Երազիկ Արսենի Գյունաշյանին վաճառելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 19-ի թիվ 26 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

5.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի հոկտեմբերի 28-ի վճռով /գործ՝ թիվ ՇԴ1/0216/02/20/ քաղաքացի՝ Հրանդ Արզումանի Սահակյանի սեփականությունը ճանաչված Մարմաշեն համայնքի Քեթի բնակավայրի 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող նախկին վարչական շենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-119-0033-0011 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0.034376 հեկտար

հողամասը ուղղակի վաճառքով քաղաքացի՝ Հրանդ Արզումանի Սահակյանին օտարելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

6.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի 2021 թվականի մայիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքում <<Մարմաշենի Հենրիկ Սերոբյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> թիվ 217 որոշումը և համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 03-ի թիվ 66-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

7.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի 2021 թվականի մայիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքում <<Ջաջուռի մանկապարտեզ>> համայնքայի ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> թիվ 218 որոշումը և համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 03-ի թիվ 64-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

8"Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի 2021 թվականի մայիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքում <<Քեթիի մանկապարտեզ>> համայնքայի ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> թիվ 219 որոշումը և համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 03-ի թիվ 65-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

9.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում, Վահրամաբերդ բնակավայրի տարածքում գտնվող, Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող 08-108-0118-0009 կադաստրային ծածկագրից գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքի 0.27283 հեկտար հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի հողերի կատեգորիա, հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն փոխելու համար համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

10.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող հողերից աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

11.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող գույքն /գյուղատնտեսական տեխնիկա/ աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու, աճուրդային հանձնաժողով ստեղծելու եվ աճուրդային կանոնակարգը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

12.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

13.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

14.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը համարվող 181.66 քառակուսի մետր մակերեսով կիսակառույց շինությունը

աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու, աճուրդային հանձնաժողով ստեղծելու և աճուրդի կանոնակարգը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

15.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի տարածքում գտնվող Մարմաշեն վանական համալիրի պահպանման ու սպասարկման համար 1.7678 հեկտար մակերեսով հողամասը սեփականության իրավունքով անհատույց Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն տրամադրելու մասին

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյան/

10.Դիմումների քննարկում:

Օրակարգը հաստատվեց ավագանու կողմից՝ բոլորը քվեարկեցին <<կողմ>>:

Օրակարգի 1-ին հարցը <<1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի 2021 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին>> ավելի մանրամասն զեկուցեց Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արմինե Մարդոյանը: Ավագանու կողմից առարկություններ եղան բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտների կատարման / Հարկեր տուրքեր, Գույքային հարկեր անշարժ գույքից, Գույքահարկ փոխադրամիջոցներից/ ցածր ցուցանիշների հետ կապված, գործուղումների ծախսերի հետ կապված, ավագանու անդամներ՝ Գարեգին Մկրտչյանը և Մանուկ Առաքելյանը պահանջեցին նաև գործուղման ծախսերի հետ կապված փաստաթղթաշրջանառությունը, որը տրամադրվեց աշխատակցի կողմից: Այնուհետև <<1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի 2021 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին>> հարցին <<կողմ>> քվեարկեց Արտյոմ Զաքարյանը, <<ձեռնպահ>> քվեարկեց Լևոն Հովսեփյանը, իսկ մյուս ներկա ավագանու անդամները՝ Պետրոս Սահակյանը, Ռուստամ Առաքելյանը, Մանուկ Առաքելյանը, Գարեգին Մկրտչյանը, Ջանիբեկ Ղաֆարյանը և Սլավիկ Խաչատրյանը քվեարկեցին <<դեմ>>:

Օրակարգի 10-րդ հարցի <<10.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող հողերից աճուրդով օտարելու,

օտարման մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին>> քննարկման արդյունքում որոշվեց հավելվածի 7-րդ կետը թողնել հաջորդ նիստի քննարկմանը:

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Մեկ հեկտար հողամասի կադաստրային արժեքը (դրամ)	Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ (դրամ)	Մեկնարկային արժեքի նախավճարի չափը	Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝կադաստրային արժեքի նկատմամբ(%)
						Հողի կարգ	Ջրովի/անջրդի						
7	Մարմաշեն համայնք Գ. Մայիսյան 1-ին փողոց, 27/1 հողամաս	08-077-0013-0005 06072021-08-0020	բնակավայրերի	Այլ հողեր	0.059			կառուցապատում	Չկան	5150000	310000	15500	100 %

Քննարկվեց օրակարգի 15-րդ հարցը <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի տարածքում գտնվող Մարմաշեն վանական համալիրի պահպանման ու սպասարկման համար 1.7678 հեկտար մակերեսով հողամասը սեփականության իրավունքով անհատույց Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն տրամադրելու մասին>>, ավագանուն ներկայացվեց <<Մարմաշեն>> վանական համալիրի սպասարկման տարածքի չափագրած հատակագծերը: Այնուհետև ավագանին որոշեց հստակեցնել <<Մարմաշեն>> վանական համալիրի սպասարկման հողամասի չափագրված հատակագծի կոորդինատները և առաջիկա նիստերին քննարկել հարցը:

Դիմումների քննարկման ժամանակ ներկայացվեց, որ ի պատասխան ՀՀ Շիրակի մարզի <<Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Սպարտակ Թորոսյանի գրության <<Հայկական Կարիտաս>> ԲՀԿ-ի ֆինանսավորմամբ դպրոցում ջեռուցման համակարգի արդիականացման նպատակով ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանը անձնական միջոցներից 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով կատարել է ներդրում, նշենք նաև, որ 2021 թվականի մարտի 19-ի ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու թիվ 35 որոշմամբ համայնքի բյուջեից համաֆինանսավորման տեսքով վերը նշված ծրագրի իրականացման նպատակով կատարվել էր ներդրում 920000 /ինը հարյուր քսան հազար/ ՀՀ դրամի չափով: Քննարկվեց նաև ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մայիսյան բնակավայրի բնակիչներ Սիրանուշ Գրիգորյանի և Ժորա Ալեքսանյանի դիմումները դրամական

աջակցություն տրամադրելու մասին, սակայն ավագանին մերժեց դիմումները՝ պատճառաբանելով, որ վերը նշված ընտանիքներին բազմիցս տրամադրվել է դրամական աջակցություն:

Առդիր՝ 120 թերթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝			
Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝			
Ա. ՁԱՔԱՐՅԱՆ՝			
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝			
Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ՝			
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝			
Պ. ՍԱՀԱԿՅԱՆ՝			
Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ԱՐՇԱԿՅԱՆ**

«16» օգոստոսի 2021 թվական
գյուղ Մայիսյան